

Բանալի բառեր՝ Եներգետիկ անվտանգություն, Եներգախնայողություն, կայուն զարգացում, վերականգնվող Եներգետիկա, Ներմուծում:

ՀՏԳ 620.91

## ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### Աննա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

### Նորա ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՊՏՀ, տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ Եներգետիկայի ոլորտում հրամայական խնդիր է դարձել արտադրող հզորությունների սերնդափոխության արդիականացումը: ՀՀ Եներգետիկայի բնագավառի զարգացման բարդություններից կարելի է նշել արդյունաբերական նշանակություն ունեցող տեղական հանածո վառելիքային պաշարների բացակայությունը: Ստեղծված իրավիճակի բարելավման նպատակով վերջին տարիներին արտադրող հզորությունների, էլեկտրական Եներգիայի տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման համար ներգրավվել են Գերմանական KfW բանկի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, Համաշխարհային բանկի միջոցները<sup>1</sup>: Եներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված լինելով երկրի Եներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, մեծ ուշադրություն է ցուցաբերում Հայկական ԱԷԿ-ի անվտանգության բարձրացման միջոցառումներին, Նոր ատոմային Եներգաբլոկի կառուցմանը և վերականգնվող Եներգետիկայի զարգացմանն ուղղված ծրագրերին<sup>2</sup>:

Կառավարությունն իրականացրել է որոշակի քայլեր, մասնավորապես

- վերջին տարիներին Եներգետիկայի բնագավառում շարունակվել և խորացվել է կառուցվածքային բարեփոխումները: Մասնավորեցվել են գազամատակարարման համակարգը և բաշխիչ էլեկտրացանցը, ՀԷԿ-երի, Սևան-Հրազդանյան կասկադը, Հրազդանի ՋԷԿ-ը և այլն,

- ատոմային Եներգետիկայի հեռանկարային զարգացման նպատակներով «Եներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, որի համաձայն վերացվել է ատոմային Եներգետիկայի նկատմամբ պետական մենաշնորհը,

- ավարտվել է 220կՎ լարման հաղորդող ցանցի ենթակայանների գերակշռող մասի արդիականացման աշխատանքները

- Եվրոպական Միության Ինոգեյթ ծրագրի միջոցներով կառուցվել է Կողբի գազաչափիչ հանգույցը և Աբովյանի ստորգետնյա գազապահեստարանում որոշ սարքավորումների արդիականացման աշխատանքներ իրականացվել,

- սկսվել է «Վերականգնվող Եներգետիկայի և Եներգախնայողության» հիմնադրամի և գերմանական KfW բանկի դրամաշնորհի հաշվին փոքր ՀԷԿ-երի վերականգնման աշխատանքները:

Համակարգի հեռանկարային զարգացման, էլեկտրաէներգիայի աճող ներքին պահանջարկի բավարարման, Հայաստանի Եներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովման խնդրում կարևորվում են Եներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության հետևյալ ուղղությունները,

- սեփական աղբյուրների առավելագույն օգտագործում,

- ատոմային Եներգետիկայի հետագա զարգացում,

- Եներգաարդյունավետության խթանում և խրախուսում<sup>3</sup>:

Հայաստանի Եներգետիկ անկախության, տնտեսության մրցունակության և բնակչության կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից հեռանկարային է Եներգետիկ ռեսուրսներ օգտագործող բոլոր բնագավառներում Եներգաարդյունավետության և Եներգախնայողության մակարդակի բարձրացումը: ՀՀ կառավարությունն առաջնային է համարում Եներգախնայողությունը, որպես երկրի Եներգետիկ անվտանգության, տնտեսական մրցունակության մեծացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց: Հիմնվելով «Եներգախնայողության և վերականգնվող Եներգետիկայի ազգային ծրագրի» վրա Համաշխարհային բանկը իրականացրել է ուսումնասիրություն, որով բացահայտեց նշանակալի տնտեսապես և ֆինանսապես կենսունակ Եներգախնայողության ներուժ ունեցող ոլորտներ:

Վերջին տարիներին ֆինանսավորման կտրուկ աճը պայմանավորված է այդ տարիներին ծրագրերի հիմնական աշխատանքների իրականացմամբ, որոնց արդյունքում էլ զգալի առաջընթաց է արձանագրվել:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ ավարտվել են «Վանաձոր-2», «Կամո» և «Ալավերդի-2» ենթակայանների վերականգնման աշխատանքները»: Եներգետիկայի ոլորտում իրականացվող ներդրումներն առավելագույն

<sup>1</sup>Միջազգային համագործակցություն:

<http://www.minenergy.am/page/379>

<sup>2</sup>ՀՀ Նախագահի կարգադրություն, 23.10.2013թ., «ՀՀ Եներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ» ՆԿ-182-Ն :

<http://www.minenergy.am/page/482>

<sup>3</sup>ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30, «Կայուն զարգացման ծրագիր», N 1207 –Նորոշման, ք երևան, Հոկտեմբեր 2008- էջ 160

նպաստում են Եներգամատակարարման հուսալիության և անվտանգության բարձրացմանը, ինչպես նաև տեխնիկական և առևտրային կրողատնտեսի նվազեցմանը:

Եներգետիկ համակարգի հիմնական խնդիրների պետական կարգավորման ջանքերը պետք է կապված լինեն բնագավառի զարգացման՝ ներդրումային, ֆինանսական և այլ ծրագրերի մշակման, բարոյապես և ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների վերակառուցման ու արդիականացման գործում առկա վարկերի արդյունավետ օգտագործման, նոր վարկերի ձեռք բերման, սեփական վերականգնվող Եներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների օգտագործման, շուկայի ազատականացման հետ: Նման խնդիրների լուծումը կապահովի հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի մատակարարում, որն էլ իր հերթին կխթանի երկրի տնտեսական կայուն զարգացումը: KfW Գերմանական բանկի աջակցությամբ իրականացվել է «Գյուլմի-2» ենթակայանի վերականգնման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2010-2014թթ): Ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևոր նշանակություն, որի արդյունքում կբարձրանա ենթակայանի հուսալիությունը: KfW բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը (մասնավորապես՝ Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների ու սարքերի նախագծային հզորությունները), ըստ որի կբարձրանա հուսալիությունը, էլեկտրաէներգիայի որակն ու քանակը: Այս ծրագիրն իրականացվում է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի կողմից և 2013-2015թթ համար տրամադրվել է համապատասխան ֆինանսական միջոցներ 2013 թվականին՝ 5 927 657.7 հազ դրամ, 2014 թվականին՝ 6 346 913.7 հազ դրամ, 2015 թվականին՝ 6. 062 248.2 հազ դրամ<sup>4</sup>: Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ 2011-2016թթ նախատեսված է իրականացնել էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Հրազդան ԶԷԿ-ից մինչև Շինուհայր 220կՎ ենթակայան ընկած Նորադուղ-Լիճք-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220կՎ օղակի գծերի շուրջ 230կմ հատվածը<sup>5</sup>: Այս ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջոցներով:

Ներկայումս մի բանի դրնորներ աջակցում են Կառավարության իրականացնելու

Եներգախնայողության ներուժը.

- 20 միլիոն ԱՄՆ դոլար - Հայաստանի կայուն Եներգետիկայի ֆինանսավորման միջոցներով ՎՇԲ աջակցություն մասնավոր գործարարներին Եներգախնայողության ներդրումային միջոցների հասանելիություն տեղական առևտրային բանկերին վարկային գծերի հատկացման միջոցով,

- 3 միլիոն ԱՄՆ դոլար - ՄԱՉԾ/ԳԲՀ ծրագրի շենքերի Եներգախնայողության բարելավման համար, որն աջակցում է շենքերի Եներգաարդյունավետության պահանջներով տեխնիկական ստանդարտների մշակման, Եներգախնայողության նյութերի փորձարկման և սերտիֆիկացման, հանրային իրազեկման, շենքի ամբողջական նախագծման փորձարկման միջոցով,

- 10 միլիոն ԱՄՆ դոլար ԳԲՀ/ԳԲԸ ծրագրին աջակցում է հանրային և սոցիալական շենքերի Եներգախնայողության բարեփոխումները (դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, փողոցային լուսավորության համակարգ), և Եներգախնայողության օրենսդրական դաշտի բարեփոխումներ: Ծրագիրը նախատեսում է 100 շենքերի Եներգախնայողության կիճակը: Արդեն նորոգված շենքերում Եներգախնայողությունը միջինը 45% է<sup>6</sup>:

Հաշվի առնելով վերը նշվածներն, ինչպես նաև ոլորտի զարգացման ու կառավարման բացթողումները անհրաժեշտ է.

- ապահովել ցածր գներով հուսալի էլեկտրամատակարարում միևնույն ժամանակ խթանելով երկրում Եներգախնայողությունը,

- ապահովել ԱԷԿ-ի անվտանգ շահագործումը մինչև շահագործումից հանելը՝ առանց անընդունելի տնտեսական, սոցիալական, բնապահպանական և Եներգետիկ անվտանգությանը վնասի ազդեցությունների,

- ապահովել բնապահպանորեն կենսունակ Եներգամատակարարում՝ հիմնված կայուն զարգացման սկզբունքների վրա և Հայաստանի Հանրապետության միջազգային բնապահպանական պարտավորություններին համահունչ,

- կառուցել ֆինանսապես կենսակայուն Եներգահամակարգ՝ Եներգա մատակարարող բոլոր կառույցների տնտեսապես արդյունավետ գործունեությամբ և մասնավոր կապիտալի մասնակցությամբ:

Գիտական գնահատումներից երևում է, որ երկրի Եներգետիկ անվտանգությունը ապահովելու և արտաքին ռիսկերը նվազեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն Եներգակիրների տարատեսակականացումը և նրանց պահեստավորման հնարավորությունները: Ազգային Եներգետիկ անվտանգության 2013թ հայեցակարգն ընդգծում է ՀՀ կառավարության ռազմավարությունը՝ հասնելու Եներգետիկ անվտանգության՝ վառելիքի բազմազանեցման, վառելիքի պահեստարանների ստեղծման և արտադրական հզորությունների պահուստի միջոցով: Հայեցակարգային մոտեցումները բացահայտում են վերականգնվող Եներգետիկ տեխնոլոգիաների խթանումը, զագացումը և ներդրումները, որպես Հայաստանի համար հույժ կարևոր՝ իր Եներգետիկ առաջարկի և Եներգետիկ անկախության հասնելու համար: Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարությունը և Ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանել են Եներգետիկ ոլորտի 2012-2017 թթ. համար ռազմավարական նպատակներ.

- Եներգետիկ անվտանգության բարձրացում,

- վերականգնվող Եներգետիկայի զարգացում, այդ թվում առկա հիդրոէներգետիկայի ներուժի արդյունավետության մեծացում և Եներգամատակարարման այլընտրանքային աղբյուրների ստեղծում,

- համակարգի հուսալիության բարձրացում,

- տարածաշրջանային առևտրի զարգացում,

- մաշված էլեկտրակայանների փոխարինում նորերով,

- Եներգաարդյունավետության խթանում,

- միջուկային Եներգետիկայի հետագա զարգացում<sup>7</sup>:

<sup>4</sup>ՀՀ Եներգետիկայի նախարարություն, Միջնաժամկետ ծախսային ծրագիր 2014-2016:

<http://minenergy.am/page/409>

<sup>5</sup>Տես նույն տեղը:

<sup>6</sup>ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻ ԱՅԻՆՆԵՐԿԱՆՍՏՐԱԿՏԻՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:

[http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan\\_final-June-27-2014-arm-final.pdf](http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf)

<sup>7</sup>ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻ ԱՅԻՆՆԵՐԿԱՆՍՏՐԱԿՏԻՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:

[http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan\\_final-June-27-2014-arm-final.pdf](http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf)

Տեղին է նշել, որ պետական քաղաքականության հիմնադրույթներով փորձ է արվում միասնական համակարգում կարգավորել Եներգետիկայի հետագա զարգացմամբ Էկոլոգիական, սոցիալ-տնտեսական և ի վերջո ազգային Եներգետիկ համակարգի անվտանգությունը, անկախությունը և հուսալիությունը:

Հայաստանի Եներգետիկ անվտանգության ապահովման գործում քիչ դեր չի հատկացված Եներգիայի վերականգնվող աղբյուրներին: Սակայն գլխավոր գործոնը ատոմային Եներգիան է: Այսպիսով ժամանակակից Եներգետիկ անվտանգության համակարգ ձևավորելու գործում նշմարված են մի քանի ուղղություն՝ ատոմային Եներգետիկա, Եներգիայի վերականգնվող աղբյուրներ և Եներգախնայողություն, Եներգակիրների ներկրման ճանապարհների տարատեսակացում և տարածաշրջանի այլ համակարգերի հետ ինտեգրում, բնապահպանական, սոցիալական խնդիրների լուծում, ֆինանսական կայունություն և տնտեսական շահավետություն:

Խոսելով Եներգետիկ անվտանգության և հարցի զլոբալացման մասին՝ պետք է նկատել, որ Եներգետիկ անվտանգությունն Եներգակիրներ ներմուծող և Եներգակիրներ արտահանող երկրների համար տարբեր բնույթ է կրում: Կա այն սխալ կարծիքը, որ Եներգետիկ անվտանգությունը միայն ներկրող երկրների խնդիրն է: Իրականում այն հավասարապես կարևոր է նաև արտահանող երկրների համար ևս, քանի որ ֆինանսական ճգնաժամը մեկ անգամ էլ ապացուցում է, թե որքան խոցելի են Եներգակիրներ արտահանող երկրները և որքան կարևոր է Եներգիայի համաշխարհային շուկայում կայունությունը: Գաղտնիք չէ, որ Եներգակիրներ ներմուծող երկրների համար Եներգետիկ անվտանգություն ասվածը ներմուծման աղբյուրների բազմազանությունն է և կայունությունը: Այսինքն՝ ներմուծող երկիրը ինչպիսին Հայաստան Հանրապետություն է, ներկայումս կողմնորոշված է թուլացնելու կախվածությունն այլ երկրից: Դրանով ստեղծվում են որոշակի նախադրյալներ Եներգետիկ անկախության և անվտանգության ապահովման համար: Հստակ և կարևոր դերակատարություն ունի երկրում այլընտրանքային Եներգետիկայի զարգացումը: Դրա համար կարևոր է Եներգետիկ ճկուն քաղաքականության իրականացումը: Շատ արևմտյան երկրների մասնագետների կարծիքով ներմուծող երկրների համար Եներգետիկ անվտանգության լավագույն պայմանը դա «ազատականացումն է», որով հնարավորություն կստեղծվի, Եներգետիկ հումքի ձեռք բերումը միջազգային շուկայից: Այս դեպքում որոշ երկրներ չեն կարողանա ուղղակի ազդել այս կամ այն Եներգառեսուրսի գնի ձևավորման վրա:

Ռուսաստանի Դաշնությունից գազի ներկրման գինը վերջին տարիներին շարունակաբար աճել է, ինչի հետևանքով կտրուկ կերպով բարձրացել են բնական գազի սակագները վերջնական սպառողների համար: Օրինակ՝ Հայաստանը նավթանթերների ներմուծման հարցում խնդիրներ չի ունենում, քանի որ այն գնվում է միջազգային շուկայի գներով, սակայն նույնը չի կարելի ասել գազի շուկայի համար:

*Ներկայացվել է 08.11.2017թ.  
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*